Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԹԵՄԱԿԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

✱ 3 Փետր. Բշ. — Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը փոխադարձ այցելութեան գնաց Անգլիացւոց Գեր. Տ. Ստուարթ Եպիսկոպոսին։

✱ 7 Փետր. Ուրբ. — Երեկոյեան պաշտամունքի պահուն Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց Ս. Սարգսի Նախատօնակին։

✱ 8 Փետր. Շբ. — Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց առաւօտեան պաշտամունքին և Ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին որ մատուցուեցաւ Ս. Մինասի մատուռին մէջ։

✱ 11 Փետր. Գշ. — Եգիպտոսի Վեհ. Թագաւորի Ծննդեան Տարեդարձի առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական այցելութիւն տուաւ Եգիպտոսի Ընդհ. Հիւպատոսին և մասնակցեցաւ Հիւպատոսարանի մէջ տրուած պաշտօնական ընդունելութեան։

✱ 16 Փետր. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Ցարութեան Հայոց Գողգոթայի մատրան մէջ։ Ս. Պատարագի երգեցողութիւնը որ բազմաձայն կատարուեցաւ ձայնասփռուեցաւ մէկ ժամ տևողութեամբ։ Պատարագիչն էր Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ճանազեան, քարոզեց Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան Նիւթ ունենալով «Հայ հոգևոր քերթողութիւնը»։

✱ 19 Փետր. Դշ. — Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը երեկոյեան ժամերգութեան պահուն Նախագահեց Վարդանանցի Նախատօնակին։

✱ 20 Փետր. Եշ. — Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը Վարդանանց տօնին առթիւ Նախագահեց առաւօտեան պաշտամունքին և Ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին որ մատոյց Վարժարանաց Տեսուչ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան և քարոզեց Վարդանանց Նահատակութեան վրայ, վեր հանելով անոր կրօնական, բարոյական և ազգային արժէքները։

✱ 21 Փետր. Ուրբ. — Ըստ Ս. Աթոռոյ հաստատուն իրաւանց և սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ուղղափառ Ասորւոց Ս. Մարկոս Եկեղեցւոյն մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Նարայր Վրդ. Պօղարեան. քարոզեց Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ճանազեան։

— Այսօր, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Երուսաղէմի Քաղաքապետարանի Նախագահ Պր. Ուէպոթը։

✱ 22 Փետր. Շբ. — Երեկոյին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց պաշտամունքին, և Մեծ պահոց առթիւ հոգեշնորհ վարդապետաց հետ կատարեց Եկեղեցւոյ Ս. Սեղաններու վարագուրման արարողութիւնը։

— Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը Ներկայ գտնուեցաւ ժառ. Վարժարանի սրահին մէջ ի յիշատակ Միսաք Մեծարենցի տրուած երեկոյթին։

✱ 23 Փետր. Կիր. — Բուն բարեկենդանի գոց Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ։ Դպիրք երգեցին փոքր առեանի մէջ։ Ներկայ էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

✱ 24 Փետր. Բշ. — Մեծ պահոց առաջին օրուան առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց առաւօտեան պաշտամունքին և կարդաց օրուան գիրքը։ Զկնի պաշտամունքի պատուարժան Միաբանութեան հոգեշնորհ հայրերը, ժառ. Վարժարանի և Ընծայարանի բարեշնորհ սարկաւագները, ուրարակիրները և դպիրները, և այլ Միաբանք պատրիարքարան ելլելով շնորհաւորեցին Ամեն. Ս. Պատրիարք Հօր Մեծ պահքը։

✱ 26 Փետր. Դշ. — Զկնի առաւօտեան պաշտամունքի, կատարուեցաւ «Արեւագալ»ի առաջին խմբական երգեցողութիւնը։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կարդաց «Հրաժարիմք» և «Մեղայ»ն։

— Երեկոյին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց Տեառնընդառաջի Նախատօնակին։

✱ 27 Փետր. Եշ. — Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը Նախագահեց Տեառնընդառաջի առաւօտեան պաշտամունքին, և Ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին զոր մատոյց Պատ. փոխ. Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ճանազեան և քարոզեց։

✱ 28 Փետր. Ուրբ. — Երեկոյին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց Ս. Թէոդորոսի Նախատօնակին, ի Ս. Թորոս Եկեղեցին։

Շնորհակալութեամբ ստացած ենք
Սանահակօ Տիար Մ. Պայըզեանէն
վասն բարգաւաճման *ՍԻՈՆ*ի Լ. Պ. 1։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@